ՆՈՐ-ԴԱՐ

№ 2 ՏԱՍՆԵԻՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Չորեքշաբթի, 5 Յունուարի 1894 Չորեքշաբթի, 5 Յունուարի ՏԱՍՆԵԻՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 2

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հատով 5 կոպէկ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով.
Յայտարարութիւնների բաւին 2 կոպ., բնկլամների համար կրկնապատիկը

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴՐԱՆԻԿ

ԿՈՆԴԱԿԸ

ՄԿՐՏԻՉ ՆԱՒԱՑ ՓՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՒԱՆԵԼԻ ԿԱՄՔԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ՆԱԶԱՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՆԱՒԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱԲԱՏԻԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՍԱՒՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍԻՐՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՈՂՋՈՅՆ Ձեզ, Առաքելական Եկեղեցի Հայաստանեայց, Թադէոսի, Բարդուղիմէոսի և Գրիգորի աւետարանաւ ծնեալք ի Քրիստոս. աճեալք և զարգացեալք Հաւատովք Աստուածապաշտութեան:

ՈՂՋՈՅՆ քեզ, Մայր Սիօն՝ լեառն Աստուծոյ Երուսաղէմ. եթէ ի քեզ երևեցաւ լոյսն աշխարհի Մարմնացեալ Փրկիչն, նոյն Միածին էջ ի Հօրէն, եղ զՀին Ա-րարատեալ Եկեղեցւոյն լուսակերտեալ սուրբ Էջմիածնին:

ՈՂՋՈՅՆ քեզ, Տուն և Առաքելական Աթոռ Սրբոց Յակովբեանց: Ողջոյն համայն միաբանական ուխտին Հայոց, որ իբրև խաչակիր զինուոր աքնիք և պաշտէք զտնօրինական սուրբ տեղիս և ամենայն անձնուիրութեամբ պաշտպանէք զվիճակն Հայոց ցանկալին և նախանձելին համայնից ազանց:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, Կաթուղիկոսունք և Պատրիարքունք, որ ընդ իս համալծակից Եղբայր էք ի վարել և տանել զպաշտօն Քրիստոսի Եկեղեցւոյն. գիտէք թէ քանի՛ մեծ է պատասխանատուութիւն մեր առաջի մեծ Հովուապետին, զի իւրաքանչիւր ոք ի մէնջ զիւր հօտին համարս ունի տալ:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, Հովիւք և Առաջնորդք վոքրիկ հօտին Հայոց, որ արթուն աչօք հսկէք և արածէք զՀաւատացեալ հօտն Քրիստոսի, յիշելով զբան Տեառն թէ՝ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, վարդապետք Եկեղեցւոյ, որ ուսուցանէք և աւետարանէք զԲանն կենաց. մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ, զի լի եղիւ տրտմութեամբ. թողեալ լիցին մեզք իւր, ասէ Աստուած:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, քահանայք Բարձրելոյն Աստուծոյ, որ մատակարար էք սուրբ խորհրդոյ Եկեղեցւոյն, դաստիարակք և պահապան ընտանեկան Սրբութեան, և գիտէք թէ քանի՛ մեծ է պաշտօն ձեր:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, Սարկաւագունք, որ խունկ արկանէք առաջի Սեղանոյն Աստուծոյ և մատակարար էք ողբոյն և աղքատին. յիշեցէք զԽափ սարկաւագն մեծին Ներսիսի՝ նմանողք լերուք նմա:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, Դպիրք, որ քաղցրաձայն երգօք Շարականաց և տաղից՝ շարժէք զհոգին ջերմեռանդութեան ի ժողովուրդն, պաշտել և սիրել զԱստուած, դուք զվերին սրբազան գաստուցն բերէք զնմանութիւն:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, Հարք և Եղբարք վանական ուխտին, որ պահապան հրեշտակք էք մնացեալ նշխարաց վանորէից, որք յաւերժական պարծանաց յիշատակ են մեր նախնի կրօնաւոր և գրասէր սուրբ Հարց:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, վարժապետք և ուսուցիչք. Ձեզ յանձնեալ է ազգային կրթութիւն և դաստիարակութիւն մանկանց ի պէս պէս ուսմունս և գիտութիւնս, որոյ նպատակն է միայն վարել և տանել զմարդիկ ի լաւագոյն կեանս. ոչ միայն ի բարեբաստիկ վիճակս աշխարհի, այլ և ի Վերին Քրիստոսի արքայութիւն:

ՈՂՋՈՅՆ, Ձեզ, խմբագիրք Հայոց, որ ճգնիք անդադար յաշխատութիւնս և իբրև հրապարակախօս մունետիկ, գրով և թղթով վարէք զժողովուրդն ի յառաջդիմութիւն և քաղաքակրթութիւն՝ բանալով զմիտս նոցա ընդունել զլաւն և խորշել ի վատէն: Զգո՛յշ, զգո՛յշ, ջանացէք միշտ ի շինել, զի այս է ձեր սեպուհ պարտիք:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, յօրինիչ մատենագիրք և թարգմանիչք գրոց ի զանազան լեզուաց հեղինակութեանց, զորս օգտակար համարիք բարոյական կրթութեան և ձեռնտու արուեստին գիտութեան:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, Բարերար Մեկենասք, որ քաջալերելով զգրասէր աշխատաւոր մշակն՝ ի լոյս հանէք զնորա վաստակն և ընծայէք ազգին, որով ճոխանան և հարստանան աղքատիկ մատենադարանք Հայոց:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, նախանձաւորք սուրբ Կրօնի, եկեղեցասէր, ժողովրդասէր բարեպաշտ Ոգիք, որ շինէք զեկեղեցիս և զդպրանոցս, հաստատելով և պահելով կրօնի և ուսման տաճարս, որով լուսաւորին որդիք եկեղեցւոյ և ժողովուրդն յորդորի յԱստուածապաշտութիւն, որ քան զամենայն ինչ զօրաւոր է:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, ուսանող մանկունք և օրիորդք, եղբարք և քոյր, որ ձեռն ի ձեռն տուեալ ի միասին երթայք և գայք ի կըրթութեան տաճարն. բարեբաստիկ և երջանիկ էք, եթէ հաւատար կրթութեամբ պատահեալ միմեանց ձեռն տայք լաւուր պսակադրութեան Ձերոյ ի սուրբ ամուսնութիւն:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, մայրաքաղաքացիք և գաւառական քաղաքացիք, որ պարապիք ի ձեռակերտ արուեստս և ի շահավաճառութիւնս, որ աշխատիք լառաջ վարել զգործս Ձեր իմաստուն տնտեսութեամբ և ճարտարագիտութեամբ, միշտ մրցելով և զարգանալով ըստ պահանջման ժամանակին:

ՈՂՋՈՅՆ Ձեզ, բնակիչք գաշտաց և լերանց շինական երկրագործ ժողովուրդ, որ սիրէք զհողն և մաճ, զոչխարն և տաւար, դուք աշխարհի բարի և անխարդախ մշակն էք, դուք հարազատ որդիք էք նախահօր մերում. գործեցէք զերկիր և պահեցէք, գիտելով թէ միայն երկիրն է Ձեր կեանք և զօրութիւն. միշտ չանացէք անկորուստ պահել այդ հայրենատուր ժառանգութիւն:

Ցետ ողջունելոյ զամենայն դասակարգս Ձեր, ժողովուրդ Հայոց, դառնամ արդ պատմել Ձեզ թէ զինչ արար Տէր ընդ իս և գիտէք արդէն զի հռչակեցաւ ընդ ամենայն աշխարհ:

Ո՛չ որպէս կամին մարդիկ, այնպէս առնէ Տէր, այլ որպէս ինքն կամի և ո՛վ կարէ հասու լինել անքննին խորհրդոց Նորա, զի ո՛ գիտաց զմիտս Տեառն և ո՛ եղև նմա խորհրդակից թէ խելամուտ արասցէ զնա:

Մինչ փոքրիկ և կրտսեր էի ի մէջ եղբարց և արածէի զհիմ փոքրիկ հօտն ի լեառն Վարագայ, առ հովանեաւ Քրիստոսի Աւազ սուրբ Նշանին, Ձեռն Տեառն կալաւ զիս, ած յԵրուսաղէմ և կացոյց ի վերայ լերինն Սիօնի, ուր երևեցաւ Բանն Բժիշկ մարդկութեան և վերանորոգիչ հնացեալ մարդոյն:

Յերեսուն ամաց անտի մինչև ցեօթանասուն ամն իբրև խեցեղէն մի տկար անօթ միշտ վարեալ և գլորեալ ընդ քարքարուտ ելևէջ առապարս աշխարհի, այնպէս եղէ զի կարծեցին մարդիկ թէ խպաո՛ ջախջախեցայ. և զինչ էր, որ կենդանի պահէր զիս. միայն հեզութիւն, և խպաո՛ համբերութիւն:

Անդ ի Սիօն մօտ էր նորոգիչ Բրուտն Յիսուս, որ անդրէն վերըստին նորոգեաց զբեկեալ անօթս: Միանգամ և երկիցս հիւանդացայ յոյժ, այնպէս թուեցաւ ինձ թէ հասեալ կամ առ դուռն գերեզմանին, և եղէ ես որպէս զոստայն մերձ ի հատանիլ, սիրտ իմ և շունչ գելաւ յիս, լացի և գոչեցի. ո՛վ Տէր, դեռ տարաժամ է ասացի, դեռ բազմապատիկ պարտս ունիմ առ Ինձ և առ եկեղեցին, թոյլ տուր, դարձո՛ զոգի իմ, զի կեցից և վճարեցից: Ո՜հ թէ մեռանիմ չմնամ պարտապան առաջի Քո ահաւորատենիդ:

Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ, և յաւել ինձ նոր կեանս, վերացոյց ի լեռնէն Սիօնի, եգ ի Սիօն Ա-

բարատայ, ի կաթուղիկէ էջմիածին և ասաց. Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ Հայոց և հովիւ վարատեալ հօտին սուրբ Գրիգորի: Ահա քեզ և ժամանակ, երթ վճարեա զպարտս քո:

Խոնարհելով առաջի երկնից Հօր կամաց և մեծարելով զՀամազգային միաձայն ընտրութիւնն, ահաւասիկ գամ ի վճարել զմնացորդ նուիրական պարտս իմ, զոր ունիմ առ Եկեղեցին Հայաստանեայց և առ ժողովուրդ Հայոց և գիտէք թէ քանի՛ շատ բազմապիսի և բազմապատիկ են չափ և կշիռ պարտուցս:

Այլ ես մինչ հասեալ կամ ի ծերութիւն և անցեալ զեօթանասունն ամն, մինչ ձեռս ի վեր կալեալ այլքն ածեն ինձ գօտի, ես կարացից վճարել զայնչափ պարտս գոնէ փոքրամասն տաղանդին չափով, զոր ինձ աւանդեալ է Տէրն և պահանջէ շահագործել տոկոսիւք և պարզերես կալ առաջի պահանջողին:

Մինչ խոկամ զարհուրիմ ես, ո՛վ Եկեղեցի Հայաստանեայց, որ ընդ ամենայն հեռաւոր աշխարհս սբփռեալ կաս տարագրեալ ի հայրենի քո տանէն, չը գիտեմ թէ որպէս կարեմ վարել զհովուական տեսչութիւն իմ: Մ՛թէ նստեալ յԱյրարատ՝ մինչ ի Հնդիկս և յԵրոպ և այլ հեռավայրս զօրեմ տեսանել զձեզ: Եւ զի՞րդ հնար է ինձ արթնել զՀօտն սեփական, որ ընդ ամենայն աշխարհս ցիր և ցան կան, անտես յաչաց իմոց և ուր չկարեն հասանել ոտք այցելութեան իմոյ:

Այո՛, առաքեցայ ես ի լեռնէն Զիթենեաց, այլ չեմ ազատ առաքեալ, շրջել ոչ ի հեթանոս, այլ յամենայն եկեղեցիս Հայոց, կենդանի բարբառով քարոզել և ուսուցանել, աչօք իսկ տեսանել զցաւս Հօտին իմոյ և հոգալ զդարմանն: Այլ զինչ իցէ մարդոյն դարմանն: Իցէ թէ գթած Սամարացին անցանէր զբե:

Ուստի մնալ ինձ միայն, որ ըստ նախնի սովորութեան Հօտասէր Հովուաց՝ Ընդհանրական գրով և թղթով խօսիլ ընդ ձեզ, ժողովուրդ Հայոց, թէ յերկրի աստ մինչչև մեռեալ իցեմ և թէ յերկինս, զի և անդ կենդանի եմ Հոգւով, ուր Հոգիք մեր նախնի սուրբ Հարց կան և աղօթեն վասն ձեր:

Այլ ունիմ ես աչս, որ մօտ են և տեսանեն զձեզ, նոքա են իմ ընտրելակից եղբարք, Հովիւք և Առաջնորդք իւրաքանչիւր վիճակաց, որ յանձնեալ է ոչ լինէն, այլ Քրիստոսէն, Հովուել և յանձանձել, պահել և հաստատել ի հաւատս Առաքելական Եկեղեցւոյն Հայաստանեայց, որոյ Հիմն Թադէոս և Բարդուղիմէոս եղին և զոյզ շինուածն ած ի կատար Հրաշալի նահատակութեամբ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն:

Գիտէք իսկ և Հռչակեցաւ, թէ յաւուր Հանդիսի օծման մերում առաջի Իջման սուրբ Տաճարին՝ ուխտեցի Հաւատարիմ մնալ առաջի Հիմն, և շինուածն առաքելական եկեղեցւոյս Հայաստանեայց և պինդ պահել զաւանդութիւնս մեր նախնի սուրբ Հարց, զգուշանալ չխրամատել զցանկն Հայրենի:

Եւ դուք իսկ ուխտակից էք ընդ իս և զնոյն ուխտն ունիք ի ձեռնադրութենէ շնորհաց, անարատ և անաղարտ պահել զկնիքն, որ աւանդեալ է մեզ ի Քրիստոսէ յԱռաքելոց և ի սրբազան Հայրապետաց:

Ուստի կայ և մնայ մեզ ամենեցուն երկիւղածութեամբ ծառայել առաջի Տեառն, զի ունիմք մեք իւրաքանչիւր զմեծ պատասխանատուութիւն ըստ աստիճանի և շնորհաց, որ տուեալք են ի Հոգւոյն պահել զեկեղեցին, Հոգալ վասն եկեղեցւոյն և թէ յաշխարհի աստ պատրաստի և առաջի մեր Քրիստոսի խաչ՝ յօժարութեամբ կրել և երթալ զհետ զօրագլխոյն, որ ասաց. «որ ոչ առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ՝ չէ ինձ արժանի»: Շնորհ մեծ է մեզ, եթէ սիրով և համբերութեամբ կրիցեմք զնոյն խաչ:

Աղօթեցէք վասն իմ, ով գործակից Հոգևոր իմ Եղբարք, զի գիտէք թէ խաչն իմ ծանրագոյն է, զոր եդ ի վերայ թիկանց իմոց Եկեղեցին Հայաստանեայց: Այլ թէ դուք զօրավիգ լինիջիք ինձ, որպիսեօք Սիմէօն Կիւրենացին, ես յայնժամ զօրացեալ ի Հոգւոյն՝ բարձեալ զխաչն սիրով, ածեմ ի կատար Golgothային:

Եւ ես աղօթեմ վասն Ձեր, զի և դուք զնոյն խաչն համբերատար սիրով բարձեալ երթիջիք զհետ խաչեալ Փրկչին մերոյ, զի անհնարին է մեզ խուսափել ի խաչէն, քանզի ասաց Յիսուս. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք: Եւ զինչ իցէ նեղութիւն մեր առ նեղութիւն նահատակ նախնեաց:

Իսկ դուք Եկեղեցի և ժողովուրդ Հայոց, որ ընտրեցիք զիս Հովիւ Ձեզ, ես ապաստան լինիմ աղօթից ձերոց և հաւատամ թէ լսէ Տէր ձայնի աղաչանաց Ձերոց և պահէ զիս վասն սիրելի եկեղեցւոյն իւրոյ:

Կեցից ես վասն Ձեր և դուք վասն Քրիստոսի: Ամէն:

ՄԿՐՏԻՉ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Դրեցաւ անդրանիկ Կոնդակս օրհնութեան ի 15 դեկ. 1893 ամի Փրկչական և ըստ տօմարիս Ռուսոց ի Մայր Աթոռս Հայաստանեայց ի Ս. Էջմիածին.
ի Վաղարշապատ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Ընդհատակեայ տպագրութիւն)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

—

Հայաստանի Նորագոյն Հանրապետութեան Ժողովրդին

Ընկերներ եւ ընկերուհիներ,

Ահա եկաւ ժամանակը, որ մենք մեր ձեռքում վերցնենք մեր երկրի ճակատագրի ղեկը եւ ինքներս մեզ համար ստեղծենք մի նոր կեանք, որ համապատասխանի մեր ազգի ոգուն, մեր ազգի պահանջներին եւ մեր ազգի ազատ զարգացման ձգտումներին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ցած թղթադրամների գումարի մասին, թէև այդ գումարը 3,000 ր. աւելի չէ-նի։

Երէկ «Պրաւիտելստվեննի Վեստնիկ» թագիրը ասնում էր իւր 25 ամեակը։

ՀՈՒՄ.—Զինուորուած աւազակախմբ-ներ են յայտնուել Մաոսոյի և Կարրա-ոյի միջև. մի քանի գիշերապահ ժան-արմներ հրացանաձգութեան ենթար-ուեցան. երկու ժանդարմ վիրաւորուած ն և մէկը սպանուած։

ՊԱՐԻԶ.—Լոնդոնի նախկին դեսպան ադղինգտոնը վախճանուեց։

Երէկ «Սարացին» ուժգնակիր նաւի որձելու ժամանակ կաթսան պայթեց. ևրաւորուած են 7 մարդ։

Բուէնոս-Այրէսից Ռոզարիօ հեռա-ուած է հետևեալը. «Կալանաւորուած են 30 անիշխանականներ, որոնք մտա-դիր էին «Օլիմպ» թատրոնը յօդս ցնդե-ցնել։

ՎԻԵՆՆԱ, 4 յունուարի.—Սկսուեց օմ-լադինների գործի քննութիւնը։ Մեղա-դրուածները իրենց պահում էին ան-պատիւ կերպով. նախագահը սպառ-նաց պատժել կարգը խանգարելուն համար։ Զուռք են անուան նախագդու-չութեան ընդարձակ միջոցներ. փողոց ներում անկարգութիւններ չեն եղած։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յունուարի.—Առաջին ներքին փոխադրութեան այսօր կատա-րուած վիճակահանութեան ժամանակ գլխաւոր գումարները տարան հետևեալ տոմսերը։

№ տոմս.	Տարեկան մարդիկ	№ տոմս.	Ստացած ֆռանկներ
7128	200,000	9869	24
15330	75,000	8279	49
8801	40,000	13456	19
5186	25,000	17459	50
14100	10,000	18346	50
17699	10,000	14206	48
6323	10,000	168	44
212	8,000	12802	38
8927	8,000	18347	21
8125	8,000	10480	34
19364	8,000	11266	36
1216	8,000	10938	23
7510	5,000	5144	24
6811	5,000	9418	49
1648	5,000	13542	30
3303	1,000	1146	47
7460	1,000	592	29
5533	1,000	7104	5
8402	1,000	19734	38
0073	1,000	553	41

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

շնայացուած 23 Բաժանորդագիր. XIII

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՒՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

երեք, յունուարի 7-ին, «հայ դերա-նական մշտական խումբը կներ-կայացնէ

I.

ՈԱՄՈՒԻԼ

տմական ողբերգութիւն 4 արա-բուածով։

Պիէսը էլեկտրայատուած չէ։

II.

ՕՒԳԵՆ ՊԵՏՐՈՎԻՉԸ ԴԻՈՒՔՈՒՐԸ

Ֆարս-վոդ. 1 գործ., հեղ. Գ. Սունդու-կեանցի

Սկիզբն է 7½ ժամ. երեկոյեան

Տոմսակները վաճառւում են թատրոնի կասսայում

Շուտով լինելու է պ. ԱՐԱՔՍԵԱՆԻ բե-նեֆիսը

Առաջիկայում խումբը ներկայացնելու է էվի ՄԻԿ ՋՈՀ», հեղ. Գ. Սունդու-կեանցի։

(540) 1—1.

ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ
ՈՒՂԼԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Գինն է 50 կոպէկ, իսկ ճանապարհա-ծախսով՝ 65 կ.։
կազմեց Մ. ԱԲԵՂԵԱՆ
Վաճառւում է «Նոր-Դար»-ի խմբագրատանը։



Склады: Москва, грузины д. Бенардаки. Ростовъ на Дону-Генчь-Оглуевъ и Шапошниковъ.

(529) 10—6

Լոյս տեսաւ եւ վաճառւում է
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ
Գրէց
ՅԱԿՈԲ ՃՈՂԱՐԲԻԳԵԱՆ
Դիմել Թիֆլիս հեղինակին։
Գինն է 10 կոպէկ։

ПРОДАЕТСЯ во всѣхъ аптекахъ и лучшихъ аптекарскихъ и парфюмерныхъ магазинахъ Россіи и въ Парижѣ, 40, Rue de Cléry.

(М.) 12—5

Թիֆլիսում Ա. Արիստակովի գեղատ խա-նութում և „Կաւկազեան Ընկերութեան" մօտ

(М.) 50—12

ОПТОВАЯ ТОРГОВЛЯ
СТЕПАНА НИКИТЬЕВИЧА АЛЕКСѢЕВА

Москва, Черкасскій переулокъ, домъ Хаджи-Гонста,

Громадный выборъ чулокъ, перчатокъ, шарфовъ, фуфаекъ, кушаковъ и всевозможныхъ игольныхъ и галантерейныхъ товаровъ.

(267) 5—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
Մ. Ա. ՆՈՎԻԿՈՎ ԵՒ Պ. Ի. ՎՈԼԿՈՎ
ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

Մեծաքանակ ապրանքների սպահեստը և գրասենեակը—Ձերկասկի փողոց, տուն Հաջիկոնստալի.

ԾԱԽՈՒՄ ԵՆ

մետաքս, մանուածք, ազգամանուռներ, (բախրոմա), ժապաւէններ, հաշիներ, կոճակներ, գուլպաններ, ձեռնոցներ, սեղմիրաններ, (կորսէտներ), հովհարներ եւ նորածեւ-գալանտերէյ ապրանքներ արտասահմանեան և ռուսական գործարանների։

ԸՆԴՈՒՆԻՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԻՐՆԵՐ

Կահ-կարասիքի և նկարներով զարդարած սեղանի սպրագաների։

(272) 25—2

«ԿԵՊՐԻԶ ՆԵՒՐՅԻ» — դուխի, օ-դը-կոլոն, օճառ։
«ԿԵՊՐԻԶ ՄԻՒՍԿ» — դուխի, օ-դը-կոլոն, օճառ։
«Ս Ա Փ Ո» — դուխի, օ-դը-կոլոն, օճառ։

Ամենաբարձր յատկութեան

ԵԼԵՒՆՈՒ ԷՄՍԻՆՑԻՐ անհնակաները մաքրելու համար, տարածում է Ելենու ախորժելի հոտ։

ԸՏՄԱՐ ՏԻՄՈԼԵՒՆ ՓՈՇԻ
ԸՏՄԱՐ ՏԻՄՈՒԼԵ ԷԼԻՔՍԻՐ

Ս.-ՊԵՏԵՐԲ. ՏԵԽՆԻԿ-ՔԻՄԻԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

Գլխաւոր պահեստն և գրասենեակը ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Ալէքսանդրինեան Թատրոնի հրապարակ. № 9.

Բաժանմունքը ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ Նիկոլաեւսկայա, տ. Շերեմետեւի։

Պահեստը ՎԱՐՇԱՒԻՈՒՄ, Նովիյ Սվետ, № 37. և կայսրութեան ամենալաւ մագազիններում։

(М). 50—40

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՈՒՐ ԲԱՑՈՒԱՊԷՍ ծախւում են
ԻՒՐ ԳՈՏԻՔՈՍՏԱԾ
Սպիտակեղէններ տղամարդկանց եւ կանանց, և ընդունւում են պատուէրներ։

Մ. Մ. ԴԻՒԼԲԵՆՋԵԱՆՑ

ՄՈՍԿՈՒԱ,
Նիկոլսկի փողոց, Շերեմետեւսկոյէ պողվորիէ, № 55.

(534) 5—3

ԵԳՈՐ ՄԿՐՏՉԵԱՆ
ԿԱՐՈՏԿԵԱՆ

Ձերկասկի փողոց, Օքչեւստվեննի դվոր, Մոսկուայում.

ՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ

Ուր ծախւում են զանազան տեսակ զուլպաներ, հաշիաներ և ասեղնային ու գալանտերէյ ապրանքներ։

(533) 7—3

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ.

Մեծ պահանջը և մեծ անունը, որ ունին ՄԵՐ ՀՆԱՐԱԾ

ԳՈՒՆԱՒՈՐ Օ-ԴԸ-ԿՈԼՈՆԸ,
ԳԼԻՑԵՐԻՆԻ ՕՃԱՌԸ ՃԱՄՈՒԿՆԵՐՈՎ,
ԳԼԻՑԵՐԻՆԻ ՊՈՒԴՐԸ,
ՊԱՐՍԿ. ՅԱՍՄԻԿԻ և ՅԱՓՐՈՒԿԻ ԷՔՍՏՐԱՏԸ,
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿՂԻԿՆ ԵԻ ԱՅԼՆ

մեր մրցակիցներին դրուած են ՆՄԱՆԵՑՆԵԼ, ոչ թէ միայն անունով, այլ և մեր յատուկ ապրանքների արտաքինով, որպես զի դրանով մոլորեցնեն հասարակութեանը և այդպիսով մեծացնեն իրենց ապրանքների վաճառումը. ուստի խնդրում ենք արդյ գնողներին մեր ապրանքը գնելիս մանրազնին ուշք դարձնել ֆիրմայի և գործարանի մարկի վրայ։

Бокъ Бокъ
БРОКАРЪ и КЕ
ВЪ МОСКВѢ
1864 г. 1864 г.

ԲՐՈԿԱՐ ԵԻ ԸՆԿ.

(М.) 8—1.

KATEAUX A VAPEUR FRANÇAIS A. PAQUET ET Cie

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷ ԵԻ ԸՆԿ."

Կանոնաւոր և ուղիղ երթեւեկութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը երկու շաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԵԼ։

Բաթումից Մարսէլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և կ. Պոլիս քաղաքները։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գիջուն ունին։

Բաթումից մեկնում է՝
Չորեքշաբթի յունուարի 12/24-ին. և այդպէս երկու շաբաթը մի անգամ չորեք. օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։ Տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել հետեւեալ գործակալներին.

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴՈՒԱՐՆՈՑԻՆ, Նաբերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆՆԱՆԻՆ, Սիոնի փողոց, քարուանսարայ Գէորգ աղայի։
Բագումում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիբեակինսկայա հրապարակ։
Նովորոսիսկում—պ. ԼՈՒԻ ՈՒԵՆՑԻՆ։

(262) 20—9

ՆԵՐԿԱՅ **1894** ԹՈՒԱԿԱՆԻՆ

(ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵՑ ԹԵՐԹ

Թիֆլիսում

Կոնրատտարակուի նոյն դիրքով եւ ծրագրով ամեն օր, բացի կիրակի եւ տօներին հետեւող օրերից։

(Տարուայ ընթացքում „Նոր-Դար"-ը լոյս կըտեսնի առնուազն 220—225 անգամ)

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ը ՍՏԱՆՈՒՄ Է ԵՒ ՍԵՊՀԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, Թիֆլիսից դուրս ամիսը 1 ր. 50 կ., Հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում՝ 5 կոպ.։

ԵՒՐՈՊԱՅի, ԹԻՒՐՔԻԱՅի և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՅի բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 դոլլար։ Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում ամեն օր «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Պուշկինսկայա փողոցում, Սկուերի դիմաց։

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեանը՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Redaction du journal «Nor-Dar».

Խմբագիր հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

Цз. Цензурою Тифлисъ, 4-го. Января 1893 г. Տպարան և Վիմագ. Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы